



«ԹՈՂ ՅՈՒՆ ԲԱՆԵՐ ՏՂԱՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ» : ԴՈՒԿ. ԺԸ. 16 :

Հ Ա Տ Ա Ր Գ .

ԿՈՍՏԱՆԳՆՈՒԳՈՒԼԻՍ . ՅՈՒՆՎԱՐ 1 . 1875 .

ԹԻՒ 1



ԵՐԶԱՆԻԿ ՆՈՐ ՏԱՐԻ

Այսօր որ 1875 տարւոյն առաջին օրն է՝ Տղայոց Աւետարեբը նոր տարի կը շնորհաւորէ բոլոր իր ընթերցողներուն : Բոլոր ֆոքր Ասիա և Հայաստան, նաև Բուսնի, Պարսկաստան, Բուսիա, Եգիպտոս, Անգղիոյ և Ամերիկայի մէջ անգամ, ամէն ամիս այս թերթը կարդացողներ կան :

Այս թերթը կարդացողներէն ոմանք արդարև կը յուսան 1875 տար-

ւոյն մէջ զուարճութիւններ ունենալ : Ոմանք ալ որ ուսում սորվիլ կը փափաքին՝ կը յուսան այս տարի կտտարել իրենց այս փափաքը : Մեր փոքրիկ բաժանորդներէն ոմանք ալ որ դեռ կարդալ չգիտնալով այս լրագրին պատմութիւններն ուրիշներուն կարդալ կու տան, այս տարի զայն անձամբ կարդալ պիտի սորվին :

Բոլոր անոնք որ Տղայոց Աւետարեբը կը կարդան թող ջանան առա-

ջիկայ տարւոյս մէջ աճելու Աստուծոյ սիրոյն և սուրբ բաներու գիտութեան մէջ ալ : Ինչպէս որ կ'աճին այս աշխարհիս գիտութիւններուն մէջ :

Տարեգլխոյն, երբ շնորհաւորութեան կը պատինք, նոր լաթեր կը հագնինք, և կ'ուզենք ուրախալի բաներու վրայ խօսիլ, և այն օրը մէկգի կը թողունք ամէն անհաճոյ բան : Թերևս կը զարմանաք թէ ինչո՞ւ համար Տղայոց Աւետարեբն, այս անգամ՝ ձեզի նոր տարի շնորհաւորելու դալով, իր առաջին էջին վրայ այսպիսի պատկեր մը դրած է : Անոր համար որ, այս երկրին մէջ կան սովին պատճառաւ թշուառ, անօթի, հիւժեակ և կիսամերկ տղայք այս պատկերին ազուննան. ասոնք անհաճոյ բաներ չեն որ մէկգի թողունք և մտնանք զանոնք նոր տարւոյս այս առաջին օրը : Սոսկալի սովը որ շատ տղոց սիրտերը կտորեց այս տարի անոնց ազգականներէն մէկը շնորհուց, որ անոնց անոյշ խօսք մը ըսէր, կամ անոնց համար կերակուր կամ հանդերձ պատրաստէր. ուստի և այն տղայք, այս պատկերին մէջի տղուն պէս, փողոցները մնացած են :


Մինչ շնորհակալ կ'ըլլաք Աստուծոյ որ այս տղայոց պէս տառապանաց մէջ չէք յիշեցէք որ տղայք ալ կրնան բան մը ընել այսպիսի վիճակի մէջ գանուողներուն օգնելու, և թերևս դուք ալ կրնաք միջոց գտնել ֆոքր Ասիոյ սովելոյց համար օգնութիւն զրկողներուն ձեր կողմանէ ալ քիչ մը բան տալու :

ԻՐԵՆՑ ՎԻՃԱԿ ՄԸ ԸՆՏՐՈՂ ՏՂԱՅԻ

Երբ կը խորհիք թէ ինչ գործի հետեւելու էք մեծնալէն ետքը, և թէ ինչ մեծամեծ բաներ ընելու էք, խոր-

հեցեք նաև թէ, Աստուած ձեզի չի պատուիրեր գեղեցիկ ըլլալ, ոչ ալ կը հրամայէ հարուստ ըլլալ, կամ պատուով և իշխանութեամբ ուրիշները գերազանցել, այլ կը պատուիրէ որ սուրբ, արդարասէր և ճշմարտախօս ըլլաք :

Մարդիկ մեծ ըլլալ կ'ուզեն, և որովհետև ամէն մարդ չի կրնար մեծ ըլլալ, եւ մնացողներն իրենցմէ մեծ եղողներուն նախանձելով միշտ անհանգիստ են: Բայց մեծնալու բաղձանքը թողլով, սուրբ ըլլալ փափաքողներն այն անհանգստութիւնը չունին: Սա ալ կայ որ Աստուծոյ պատուէրներուն համաձայն ապրողները մեծ և յարգի կ'ըլլան (Մատթ. 2. 33):



ՆԱՄԱԿՆԵՐԷ ԱՊՈՒՐ

Խաղաղական ուղիանոսի մէջ շատ կղզիներ կան այս կղզւոյն նման որուն պատկերը հոս կը տեսնէք: Այս կղզիներն օղակի պէս բոլորակ են, և իւրաքանչիւրն ունի այն օղակին մէջ գեղեցիկ լայն աւազան մը ուր նաւեր անգամ կրնան ապաւինիլ ալէկոծութեան ատեն: Այս օղակաձև կղզիներէն ոմանք շատ ընդարձակ են, այնպէս որ անոնց բոլորտիքը դառնալու համար քանի մը օր պէտք է, և անոնցմէ շատերն ունին շատ սիրուն ծառեր, առողջարար ջուր և բնակիչ:

Այս բնակիչներուն վրայ պիտի պատմեմ ձեզի հոս: Յիշեալ կղզիներէն մէկ մասին բնակիչները Քրիստոնեայ են, մէկ մասինն ալ հեթանոս, բայց ասոնց մէջ միսիոնարներ կան որ անոնց Քրիստոնէութիւն կը սորվեցնեն: Միւզըր Պալտուն անուն միսիոնար մը կ'աշխատի այս օղակաձև կղզիներէն մէկուն մէջ, որ միւս տարին անգամ մը նամակ կ'երթայ:

Անգամ մը միսիոնար Պալտունին նամակներ և լրագիրներ տանող նաւը փոթորկի պատճառաւ չկրցաւ կղզւոյն այն կողմը մտնելու ուր կը բնակէր միսիոնար Պալտուն, ուստի և նաւապետը նամակներն ու լրագիրները, որ մեծ ծրար էին, կղզւոյն միւս կողմը բնակող տեղացիներուն տուաւ, և պատուիրեց որ այն ծրարը «միքիներին» տան (այս կղզւոյն բնակիչները միսիոնարին այս անունը կու տան):

Սակայն կղզւոյն այս կողման բնա-

կիչները տակաւին շատ սոգեա կու պաշտներ էին: Ոչ միայն կարդալ և գրել չէին գիտեր, հապալ կարդալու և գրելու վրայ բան մը լսած անգամ չէին, և թէ գիր ինչ է չէին գիտեր: Երբ նաւապետն անոնց պատուիրեց որ զգուշութեամբ տանին տան ծրարը միսիոնարին, և անոնց առատ պարգև ալ տուաւ որ աղէկ հոգ տանին, անոնք կարծեցին թէ ծրարին մէջ շատ մեծագին բան մը կար:

Որովհետև այն կղզիներուն մէջ երբեմն երբեմն սով կ'ըլլայ և բնակիչներուն համար աշխարհիս վրայ ամենէն պատուական բանն ուտելիքն է, այն մարդիկը կարծեցին թէ նաւապետին տուած ծրարին մէջ տեսակ մը ուտելիք կար զոր իրենք երբեք տեսած չէին, և թէ միսիոնարը զայն ուտելով կրնար տարի մը ապրել, այսինքն մինչև նաւին նորէն գալը: Ուստի ուղեցին այն հրաշալի կերակուրէն իրենք ալ ուտել: Այսպէս խորհելով ծրարը բացին, և փորձեցին նամակներն ուտել, բայց տեսան որ զանոնք հում ուտելով համ չեն աւաներ, ուստի այն նամակներուն ու լրագիրներուն մէկ մասը եփելով ապուր ըրին, բայց դարձեալ զանոնք անհամ գտան. յետոյ անոնց մէկ մասը մանր մանր կտորներ ընելով իւղով տապակեցին, և ամէնքն ալ անկէ մէյմէկ կտոր ուտելով դարձեալ համ չաւին: Յետոյ մեղրով խառնեցին նամակներուն և լրագիրներուն ուրիշ մէկ մասը, և այնպէս ալ չախորժեցին:

Մէկ կամ երկու ամիս ետքը միսիոնար Պալտունին այցելութիւն ընելով կղզւոյն այն կողմը, իմացաւ որ նաւապետ մը այն տեղի մարդոց ծրար մը յանձնած էր, և տեղւոյն գլխաւորը կանչելով հարցուց անոր: Այս մարդը նախ չուզեց ծրարին վրայով անոր բան մը ըսել, բայց երբ միսիոնարը խոստացաւ ներել անոնց, կողով մը հանեց որուն մէջ նամակներուն և լրագիրներուն կտորուանքը կային, «Ասոնք միայն մնացին», ըսաւ, «այն ծրարին մէջ եղած բաներէն, մնացածը մենք կերանք:»

Բայց այս ժողովուրդը հիմա կարդալ գիտէ, և տեղեակ է կենաց հացին:

ՓՈՒՐԻՆԻ ՏՂՈՅ ՀԱՄԱՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԸ

Ասե՛նօք պղտիկ կարմիր հաւ մը կար: Օր մը երբ ախոռի մօտ գեղինը կը բրէր, ցորենահատ մը գըտնելով ըսաւ. «Ո՛վ պիտի տնկէ այս ցորենը»: «Ես չեմ տնկեր», ըսաւ մուկը. «Ես չեմ տնկեր», ըսաւ կատունը. չունը պատասխանեց, «Ես ալ չեմ տնկեր»: Բաղն ըսաւ, «Ես ալ չեմ տնկեր»: Վերջապէս պղտիկ կարմիր հաւը, «Ուրեմն ես կը տնկեմ», ըսելով, ցորենահատը տնկեց:

Քիչ ժամանակ ետքը ցորենը բուսաւ, և երբ հասաւ, պղտիկ կարմիր հաւն ըսաւ, «Ո՛վ պիտի հնձէ այս ցորը»: Մուկն ըսաւ, «Ես չեմ հնձեր»: Կատունն ըսաւ, «Ես չեմ հնձեր»: Չունն ըսաւ, «Ես չեմ հնձեր»: Բաղն ըսաւ, «Ես չեմ հնձեր»: Անասեն հաւը հնձեց ցորենը:

Յետոյ ըսաւ հաւը, «Ո՛վ այս ցորենը ջաղաց պիտի տանի աղալու»: Մուկն ըսաւ, «Ես չեմ տանիր»: Կատունն ըսաւ, «Ես չեմ տանիր»: Չունն ըսաւ, «Ես չեմ տանիր»: Բաղն ըսաւ, «Ես, չեմ տանիր»: Ե. դարձեալ պղտիկ կարմիր հաւը տարաւ ցորենը ջաղաց, և ալիւրը բերելով ըսաւ, «Ո՛վ հաց պիտի չինէ այս ալիւրէն»: Մուկն ըսաւ, «Ես չեմ չիներ»: Կատունն ըսաւ, «Ես չեմ չիներ»: Բաղն ըսաւ, «Ես չեմ չիներ»: «Ուրեմն ես կը չինեմ», ըսաւ հաւը, և հացը եփուելէն ետքը, դարձեալ ըսաւ հաւն, «Ո՛վ պիտի ուտէ այս հացը»: Մուկն ըսաւ, «Ես կ'ուտեմ»: Կատունն ըսաւ, «Ես կ'ուտեմ»: Չունն ըսաւ, «Ես կ'ուտեմ»: Բաղն ըսաւ, «Ես կ'ուտեմ»: Բայց պղտիկ կարմիր հաւը, «Գուք պիտի չուտէք, ան ալ ես պիտի ընեմ» ըսելով հացը խածաւ, և գնաց:



ԱՅՈՒ, ԱՅՈՒ, ԳԻՏԵՄ

Աբէլ շատ զուարթ պզտիկ տղայ էր : Այնպէս կրակոտ էր որ բան մը աղէկ հասկնալու համար բաւական երկայն ատեն համբերութեամբ մտիկ չէր ընել : Երբ մէկը կը սկսէր բան մը բացատրել, Աբէլ միշտ անոր խօսքը կ'ընդմիջէր « Այո, այո, գիտեմ » ըսելով, և քիչ մը ետքը կը տեսնէր որ չէր գիտեր, և նորէն հարցնելու կու գար :

Աբէլին հայրը շատ անգամ կը ջանար ուղղել անոր այս գէշ սովորութիւնը, քանզի տղու մը համար աղէկ բան չէ կարծել թէ ինք իրմէ ձերբազոյններէն աւելի աղէկ գիտէ : Վերջապէս օր մը հայրը կանչեց զԱբէլ, և ցուցուց անոր այս ծիծառի բոյնը : « Գիտես », ըսաւ անոր, « ծիծառն ինչու համար այսպէս կը շինէ իր բոյնը » : « Ոչ », պատասխանեց Աբէլ : « Շատ աղէկ », ըսաւ հայրը, « վան զի . . . » : « Այո, այո », ըսաւ խակոյն Աբէլ հօրը խօսքն ընդմիջելով, « գիտեմ, վան զի կաւը շատ էր » : « Ոչ », ըսաւ հայրը, « այն պատմութեան նայելով զոր անցեալ օր կարդացի, ծիծառն ալ 'Այո, այո, գիտեմ', ըսելուն համար այսպէս բոյն կը շինէ » :

Անտարակոյս Աբէլ կը բաղձար գիտնալ ծիծառին բոյն շինելուն պատմութիւնը, և որովհետեւ այս երկրին մէջ ալ թերեւ Աբէլին պէս տղայք կան, այն պատմութիւնը հոս կը գնենք Աբէլին հօրը պատմածին պէս, բայց նախ կ'ըսենք որ այն պատմութենէն Աբէլ այնպէս ամբողջաւ, որ ամբողջ շարաթ մը չըսաւ « Այո, այո, գիտեմ » :

Ահա Աբէլին հօրը պատմութիւնը : Ծիծառը եկաւ գարնան, երբ ուրիշ բոլոր թռչունները շինած էին իրենց բոյնները, և որովհետեւ անիկա երբեք բոյն չի կառնէ, չէր գիտեր թէ ինչպէս ընելու էր : Ուստի հարցուց արագին, և արագիւր ծուռ ծուռ նայելով անոր երեսն ի վեր, պատաս-

խան շտուաւ : Յետոյ հարցուց ճշմարտեմբէր, և ճնշուկը բարեհալած ըլլալով ըսաւ . « Բոյն շինելը շատ դիւրին է. քիչ մը կաւ առ . . . » « Այո, այո, գիտեմ », ըսաւ խակոյն ծիծառը, « այնպէս է » : « Քիչ մը կաւ առ », շարունակեց ճնշուկը, « և տան մը յարկին վրայ ընտրէ աղէկ տեղ մը » . . . : « Այո, այո, գիտեմ », ըսաւ գարձեալ ծիծառը ճնշուկին խօսքն ընդմիջելով, « տանը յարկին վրայ » : « Յետոյ », շարունակեց գարձեալ ճնշուկը, « առ ճիւղերու կտորուանք . . . » : « Այո, այո », կրկնեց նորէն ծիծառը, « ճիւղերու կտորուանք կ'առնեմ » : « Եւ այսպէս », շարունակեց ճնշուկը, « բոյնին կէտը կը շինես, և . . . » : « Այո, այո, հասկցայ, գիտեմ », ըսաւ գարձեալ ծիծառը : « Լաւ ուրեմն, եթէ ամէն բան գիտես, իմ բաւել աւելորդ է », ըսաւ անատեն ճնշուկը և թռաւ :

Բայց ծիծառը սորվեցաւ բոյնին կէտը միայն շինել, սորվեցաւ միայն թէ ինչպէս գործածելու էր կաւը : Ուստի այսօրուան օրս ծիծառը կէս բոյն միայն կը շինէ, և կաւէ կը շինէ զայն, ու տան մը պատին կը փակցընէ, որպէս զի ուրիշ թռչունները չտեսնեն թէ անոր բոյնը մէկ կողմ միայն ունի :

Գ Ի Ն Ի

Սուրբ գերբը գիտին ինչպէս կը նկարագրէ :

« Գիտին ծաղր ընող է, ու ցքին կռիւ հանող, և ով որ ասոնց անձնատուր կ'ըլլայ, իմաստուն չըլլար » (Առակ Ի. 1) :

Գիտեմբէրութեան հետեանքն ի՞նչ է : « Որո՞նքն է վայր, որո՞նքն է ոճը, որո՞նքն են կռիւները, որո՞նքն են արատնջները, որո՞նքն են առանց պատճառի վերքերը, որո՞նքն է աչաց կարմրութիւնը : Գիտեմբէր մնացողներուն, խառնած գիտին փնտռելու գացողներուն » (Առակ ԻԳ. 29, 30) :

Գիտին վերջապէս ի՞նչ կ'ընէ : « Անիկայ ետքը օճի պէս կը խածնէ և քարբի պէս կը խայթէ » (Առակ ԻԳ. 32) :

Գիտեմբէր երկինք կ'երթան : « Ոչ գողերը, . . . ոչ գիտողները . . . Աստուծոյ թագաւորութիւնը պիտի չժառանգեն » (Ա. Կորնթ. 2. 10) :

Ուրիշները խմելու ստիպել չի տակ է : « Վայ քեզի որ քու ընկերիդ գիտի կը խմչնես, և քու արբեցուցիչ ըմպելիդդ առատ կը բաշխես, որ ուրիշներն ալ գիտնօցնես » (Ամբ. Բ. 15) :

ԼՐԱՅԵՔ ՈՎ ՓՈՐՔ ՏՂԱՅՔ

... Լրսեցէք, ով փոքր տղայքերդ, Լրսեցէք Տէր Յիսուսի, Բուն ձեզի կ'ուզէ իր
 ք, Լրսեցէք, ով փոքր տղայքերդ, Լրսեցէք Տէր Յիսուսի. Բուն ձեզի կ'ուզէ իր

Վերջ

ձայնը եւ կ'ըսէ, « Եկէք ինձի » Փոքր տղայքեր, ով է կանչողը. Ձեր օրհ-
 ձայնը եւ կ'ըսէ, « Եկէք ինձի »

նեալ Փրկիչն է նա, Կեանքն ձեզի համար սուտը, Գողգոթա, խաչին վերայ

Ո՛հ, կ'արժէ, ով փոքր տղայքերդ,
 Այս օրհնեալ Փրկիչն սիրէք.
 Ո՛հ, կ'արժէ որ ձեր սրտերը
 Անյապաղ անոր յանձնէք :
 Կը վայլէ փոքրիկ ձեռքերը
 Անոր կամքը կատարեն .
 Կը վայլէ փոքրիկ ոտքերը
 Անոր սուրբ ճամբան քալին :
 Լրսեցէք, կայլն :
 3

Փոքր աչքերն կարգան Սուրբ դիրքը
 Աստուծմէ օրուած մատնանն ,
 Եւ լրսեն փոքր սկանջները
 Փրկութեան Աւետարանն :
 Փառք թող տան փոքր լեզուները
 Գրիստոսի անչափ սիրոյն
 Թող ըլլան փոքր մարմինները
 Տաճարներ Սրբոյ Հոգւոյն :
 Լրսեցէք, կայլն :
 4

Ո՛հ, երկնից մէջ փոքր թագեր կան,
 Կան ալ փոքր ոսկի քրնարք .
 Փոքր ճերմակ պատմութեաններ կան
 Եւ փայլուն անգիտ գոհարք .
 Տէրն զանոնք ծախու առած է
 Եւ ձեզի ալ կ'ընծայէ .
 Ո՛հ, եկէք, ձեզ հրաւիրած է,
 Փոքր տղայքն ինք կը սիրէ :
 Լրսեցէք, կայլն :



ՆԻԻ ՖԸՆՏԼԱՆՏԻ ՇՈՒՆԸ

Այս տեսակ շուն երբէք տեսած էք,
 Ատոնք « Նիւ Ֆրնալանտի շուն » կը
 կոչուին, քանզի կու գան Նիւ Ֆրնա-
 լանտ կոչուած կղզիէն որ Ամերիկա-
 յի արևելեան եզերքն է :
 Ատոնց մազերը թաւ են հովուի շու-
 ներէն ոմանց պէս, միայն սև են և
 մետաքսի պէս կը փայլին :
 Վերի շան անունը Գիւր է, և սո-

վորութիւն մը ունի որ իրեն ընտա-
 նի և սիրելի եզող մարդոց ձեռքը
 կը թօթուէ : Օր մը իր բնակած անա-
 կէն դուրս գալով զնայ իր սիրտը
 ննջարանը, ուր գեղեցիկ անկողին մը
 կար վրան ճերմակ ծածկուած, և ա-
 նոր վրայ պառկեցաւ քնանալու հա-
 մար : Տիկինը տեսնելով կանչեց զա-
 նի և յանդիմանեց, ինչպէս անառակ
 տղայ մը կը յանդիմանուի : Շունը մեծ
 յարգութեամբ մտիկ ըրաւ, և երբ տի-
 կինն իր խօսքը լսեցուց, շունն իր թա-
 թը դէպ ի տիկինը երկնցուց անոր
 ձեռքը թօթուելու համար :
 Թէպէտ այսպէս մեծ է այս շունը,
 շատ երկչոտ է : Օր մը երկինք կը դո-
 ոար, և այս շունը փայլակներուն լըյ-
 սը տեսնելով տանը մէջ փախաւ, և
 պահարանի մը ետին դողդողալով
 պահուրանեցաւ : Կարծեմ թէ այն մի-
 ջոցին իր բոլոր դէշ գործքերը միտքը
 բերելով կ'առաջադրէր մարդոց վրայ
 չհաջել զանոնք վախցնելու համար :
 Բայց երբ կայծակներուն վտանգն
 անցաւ, այս շունն ալ, տղոցմէ ոմանց
 պէս, մուցաւ իր առաջադրութիւ-
 նը, և առաջուան պէս կ'ընէր :

ԳԵՇԵՄԱԲԵՐԻ ՀԱՐՑՄԱՆ ՊԱՏԱՍԻԱՆ

Այն իբր հեռու տեղէ եկող
 մարդիկ Գանանացուց ցեղերէն,
 Խեացիներէն, էին, որոնց խաբէու-
 թիւնն իմացուեցաւ, և Իսրա-
 յէլացուց ժողովուրդը զանոնք
 մեղքընէ ուղեց, բայց Յեսու ա-
 զատելով զանոնք, միայն ծառայ
 ըլլալու դատապարտեց (Տես Յես.
 Թ) :

ՊԱՐՈՅՐ Մ. ՓԵՇԵՄԱԼՃԱՆՆ

ԱՒԵՏԱԲԵՐՆԵՐՈՒՆ ԳԻՆԵՐԸ

ԱՄՍԱԿԱՆ (Հայերէն, Հ. Ե. Յ. Գրով Տաճարէն
 և Պատրիարքարան), փոսթայի ծախքով, տարին 1/2
 մէճ. : 10 հատ, մէկ անձի ուղղուած, 2 1/2 մէճ. :
 ՇԱՐԱԹԱԿԱՆ (Հայերէն, Հ. Ե. Յ. Գրով
 Տաճարէն) փոսթայի ծախքով, տարին 1 արծ.
 մէճ. : 5 հատ, մէկ անձի ուղղուած, 4 1/2 մէճ. :

Ամերիկայի միսիոնարաց ընկերութեան կողմէն
 Խմբագիր Ծ. Ք. Կրին

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱՐԱՐԻԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ
 Ձագմագճըրտ, Յակոբեան խան, Թիւ. 12.